

Կազմված է «—» հունիսի, 2019թ.
Բաղկացած է 24 թերթից
ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Արփա-Սևան»

բաց բաժնետիրական ընկերության
19.06.2019թ. կայացած բաժնետերերի
տարեկան ընդհանուր ժողովում
Արձանագրություն թիվ 01.19 ԸԺ
Գլխավոր տնօրեն՝ Պարույր Հակոբյան

_____ հունիսի 2019թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
աշխատակազմի
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության
կողմից

_____ 2019 թ.

գրանցման № _____

ՀՎՀՀ _____

**«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
(Նոր խմբագրությամբ)**

Երևան 2019

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 531 որոշման համաձայն:

Ընկերությունը հանդիսանում է ՀՀ էներգետիկայի նախարարության «Արփա-Սևան» ՓԲԸ (գրանցված Արաբկիրի շրջանում 16.02.95թ.) իրավահաջորդը:

1.2. Սույն կանոնադրությունն ընդունվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն և դրանց հիման վրա:

I ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2. Ընկերությունը ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան իրականացնում է գործունեության հետևյալ տեսակները.

2.1. Էներգետիկական կառույցների շինարարություն,

2.2. Նախագծերի հատուկ բաժինների մշակում,

2.3. Նախապատրաստական աշխատանքներ,

2.4. Հողային աշխատանքներ,

2.5. Հատուկ աշխատանքներ բնահողերում,

2.6. Շենքերի և շինությունների կարկասի կառուցում,

2.7. Շենքերի և շինությունների ուժեղացում և վերանորոգում,

2.8. Տրանսպորտային շինարարություն,

2.9. Ջրային տնտեսության կառույցների շինարարություն,

2.10. Արտաքին ինժեներական ցանցերի և սարքավորումների իրականացման աշխատանքներ,

2.11. Ներքին ինժեներական ցանցերի իրականացման աշխատանքներ,

2.12. Կոնստրուկցիաների և սարքավորումների պահպանման աշխատանքներ,

2.13. Հորատման և վերանորոգման աշխատանքներ,

2.14. Բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ,

2.15. Նախագծային, տեխնոլոգիական և շինարարական ինժեներինգ,

2.16. Միջնորդային աշխատանքներ և ծառայություններ շինարարությունում,,

2.17. Պայթեցման աշխատանքների կատարում,

2.18. Շինանյութերի կոնստրուկցիաների, շինվածքների արտադրություն,

2.19. Պարենային ապրանքների առևտուր,

2.20. Կենցաղային ապրանքների առևտուր:

3. Ընկերությունը կարող է իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած այլ տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն: Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

4. Ընկերությունն իրավաբանական անձ է, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, իր անվանմամբ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք, դրոշմներ, բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ: Ընկերությունն իր անունից կնքում է պայմանագիր, իրականացնում է սույն կանոնադրությանը չհակասող գործունեություն, ձեռք է բերում

գույքային իրավունքներ, կրում է պարտականություններ, կարող է հանդես գալ դատարանում կամ արբիտրաժում, որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Ընկերությունը համարվում է ստեղծված և կարող է գործել որպես իրավաբանական անձ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Ընկերությունը գործում է առանց գործունեության ժամկետի սահմանափակման:

6. Ընկերությունն իր գործունեության համապատասխան իրականացնում է իր գույքի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվներ բացել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում:

8. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

9. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար:

10. Ընկերությունն իրավունք ունի ստեղծել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր ու կախյալ ընկերություններ, Հայաստանի Հանրապետությունում, արտերկրում և մասնակցել նրանցում:

11. Ընկերության ֆիրմային լրիվ անվանումն է՝

Հայերեն՝ «Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերություն,

Ռուսերեն՝ Открытое Акционерное Общество "Арпа-Севан"

Անգլերեն՝ "Arpa-Sevan" Open Joint Stock Company

Ընկերության ֆիրմային կրճատ անվանումն է՝

Հայերեն՝ «Արփա-Սևան» ԲԲԸ

Ռուսերեն՝ ОАО "Арпа-Севан"

Անգլերեն՝ "Arpa-Sevan" OJSC

12. Ընկերության գտնվելու վայրն է՝ ք.Երևան Վաղարշյան 20:

II ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՆՐԱ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 51,130,000 (հիսունմեկ միլիոն հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 20,452 (քսան հազար չորս հարյուր հիսուներկու) հատ սովորական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 2,500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

14. Հայտարարված բաժնետոմսերի քանակը՝ 400,000 (չորս հարյուր հազար) հատ, անվանական արժեքը՝ 2,500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

15. Ընկերությունը կարող է փոփոխել (ավելացնել կամ նվազեցնել) իր կանոնադրական կապիտալի չափը: Ընդ որում, կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունվում է Ընկերության դիտորդ խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ), իսկ նվազեցման մասին որոշումը՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Կանոնադրական կապիտալի փոփոխման հարցով ժողովի գումարման մասին ծանուցումը պետք է պարունակի՝

ա) կանոնադրական կապիտալի փոփոխման շարժառիթները, եղանակն ու չափը.

բ) կանոնադրության փոփոխման նախագիծը՝ կապված կանոնադրական կապիտալի փոփոխման հետ.

գ) բաժնետոմսերի քանակը և դրանց անվանական արժեքի ընդհանուր գումարը, որը պետք է ստացվի կանոնադրական կապիտալի փոփոխման արդյունքում:

16. Ընկերությունն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը: Ընկերության բաժնետերերն ունեն 30-օրյա ժամկետի ընթացքում կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նոր բաժնետոմսերի

ձեռքբերման նախապատվության իրավունք, բացառությամբ սույն կետի երրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող Ընկերության արժեթղթերի սեփականատերերն իրենց իրավունքից օգտվում են բաժնետերերից առաջ՝ առնվազն 15 օրվա ընթացքում:

Ընկերության ժողովն իրավունք ունի որոշելու չկիրառել (կասեցնելու) քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի՝ սույն կետի առաջին և երկրորդ պարբերություններում նշված նախապատվության իրավունքը, ինչպես նաև սահմանելու այդ որոշման գործողության ժամկետը, եթե քվեարկող բաժնետոմսերը տեղաբաշխվում են բաց բաժանորդագրության միջոցով, և տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով:

Նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը դադարում է, եթե մինչև դրա ավարտվելն Ընկերության բոլոր բաժնետերերից ստացվել է նախապատվության իրավունքից օգտվելու կամ օգտվելուց հրաժարվելու վերաբերյալ գրավոր ծանուցում:

Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝

ա) շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ:

բ) Ընկերության զուտ ակտիվների (սեփական կապիտալի) արժեքից կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային ու անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող մասը լրիվ կամ մասնակի փոխանցելով կանոնադրական կապիտալ:

Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Ընկերությունը չի կարող ավելացնել կանոնադրական կապիտալն ավելի, քան ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

17. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է կատարվել՝

ա) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ:

բ) բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռք բերմամբ և մարմամբ:

Կանոնադրական կապիտալի նվազեցման նպատակով Ընկերության կողմից բաժնետոմսեր կարող են ձեռք բերվել միայն բաժնետոմսերի սեփականատերերի համաձայնությամբ: Ընդ որում, այդ նպատակով Ընկերությանն առաջարկված բաժնետոմսերի ձեռքբերումն Ընկերության պարտականությունն է: Եթե ձեռքբերման առաջարկված բաժնետոմսերի քանակը գերազանցում է համապատասխան որոշմամբ սահմանված քանակը, ապա բաժնետերերից բաժնետոմսերը գնվում են նրանց առաջարկներին համամասնորեն:

18. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և Ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

19. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին որոշում ընդունելուց հետո՝ 30-օրյա ժամկետում, գրավոր ծանուցում է այդ մասին իր պարտատերերին: Պարտատերերն իրավունք ունեն ծանուցումն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում Ընկերությունից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:

20. Կանոնադրական կապիտալի նվազեցման հետ կապված Ընկերության կանոնադրության փոփոխությունների գրանցումը կատարվում է այդ փոփոխությունների մասին որոշումն ընդունելուց 60 օրը լրանալուց հետո և 19-րդ կետին համապատասխան պարտատերերի բոլոր առաջացած պահանջների բավարարման դեպքում:

Կանոնադրական կապիտալի նվազեցման կապակցությամբ բաժնետերերին վճարումները, բացառությամբ Ընկերության զուտ ակտիվների արժեքն Ընկերության կանոնադրական կապիտալի չափից պակասելու հիմքով կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքի, կատարվում են կանոնադրության պետական գրանցումից հետո:

Ընկերության զուտ ակտիվների արժեքն Ընկերության կանոնադրական կապիտալի չափից նվազելու հիմքով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կատարվում է բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքի համամասնորեն պակասեցման ձևով՝ առանց բաժնետերերին որևէ հատուցման:

III ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

21. Ընկերությունը կարող է տեղաբաշխել՝

ա) բաժնետոմսեր

բ) պարտատոմսեր

գ) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր:

22. Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել սովորական, ինչպես նաև մեկ կամ մի քանի դասի արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալի 25 տոկոսը: Ընկերության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը: Ընկերության որոշակի դասի ամեն մի արտոնյալ բաժնետոմս պետք է ունենա միևնույն անվանական արժեքը:

23. Ընկերության թողարկված միևնույն տեսակի արժեթղթերը պետք է ունենան թողարկման միևնույն ձևը:

Ընկերության բոլոր բաժնետոմսերն անվանական են:

24. Ընկերության բաժնետերերի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի քանակը և անվանական արժեքը սահմանված են սույն կանոնադրության 13-րդ կետում:

Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարման միջոց կարող են լինել գույքը, ներառյալ՝ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, մտավոր սեփականությունը:

25. Ընկերությունը բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվում է ընկերության խորհրդի որոշմամբ, որով և պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները:

Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք:

Ընկերությունը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ (Ընկերության կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ) մարման ժամկետով պարտատոմսեր: Պարտատոմսերի մարումն իրականացվում է դրամով կամ այլ գույքով՝ պարտատոմսերի թողարկման մասին որոշման համաձայն:

Ընկերությունը կարող է թողարկել՝

ա) Ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր.

բ) երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր.

գ) առանց ապահովման պարտատոմսեր:

Ընկերությունը կարող է թողարկել ապահովված և չապահովված պարտատոմսեր՝ անկախ կանոնադրական կապիտալի չափից: Ընկերության թողարկված բոլոր ապահովված

պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի այն ապահովման գումարը, որը տրամադրված է Ընկերությանը պարտատոմսեր թողարկելու նպատակով:

Ընկերությունը կարող է թողարկել ինչպես անվանական, այնպես էլ ըստ ներկայացնողի պարտատոմսեր: Ընկերության կողմից տեղաբաշխված անվանական պարտատոմսերի սեփականատերերի համար պարտադիր վարվում է ռեեստր: Կորցրած անվանական պարտատոմսը վերականգնում է Ընկերությունը՝ ողջամիտ վճարի դիմաց: Կորցրած՝ ըստ ներկայացնողի պարտատոմսի սեփականատիրոջ իրավունքները վերականգնում է դատարանը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Ընկերությունը կարող է պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն ընձեռել՝ դրանց սեփականատերերի ցանկությամբ: Այդ դեպքում պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվում են մարվող գումարի մեծությունը և այն ժամկետը, որից սկսած պարտատոմսերը կարող են նարկայացվել վաղաժամկետ մարման:

26. Ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են Ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռք բերման իրավունք: Ընդ որում, Ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և դասերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և դասերի բաժնետոմսերի այն քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը և այլ արժեթղթերն Ընկերության բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:

27. Պարտատոմսերի տոկոսը վճարվում է դրանց վրա նշված ժամկետում, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ անկախ Ընկերության ֆինանսական վիճակից և ստացված շահույթից (բացի շահույթում մասնակցող պարտատոմսերից): Եթե պարտատոմսերը տեղաբաշխվում են անվանական արժեքից ցածր գներով, տարեկան տոկոսները պարտատոմսի տիրոջը կարող են չվճարվել, որը պետք է սահմանվի պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ և նշված լինի պարտատոմսում:

Պարտատոմսերով տոկոսների չվճարման կամ սահմանված ժամկետում պարտատոմսերը չմարելու դեպքում Ընկերությունը կարող է լուծարվել դատական կարգով:

28. Տպագրական եղանակով պատրաստված պարտատոմսը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության պահանջներին:

IV ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

29. Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

30. Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի՝

ա. մասնակցել Ընկերության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով:

բ. մասնակցել Ընկերության կառավարմանը:

գ. ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից:

դ. առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով և սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

ե. ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (բացի գաղտնի փաստաթղթերից և գաղտնի տեղեկություններից, ինչպես նաև Ընկերության

գլխավոր տնօրենի հրամաններից և հրահանգներից), այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.

գ. ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

է. հանդես գալ առաջարկություններով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում.

ը. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով.

թ. դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժ. Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը.

ժա. Օրենքով սահմանված կարգով ազատորեն տիրապետել, օգտագործել և տնօրինել (այդ թվում՝ օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել) իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը, բացառությամբ օրենքով և (կամ) բաժնետիրական համաձայնագրով նախատեսված դեպքերի:

31. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը չունեն ձայնի իրավունք ժողովում, եթե արտոնյալ բաժնետոմսերի որոշակի դասերի համար օրենքով և սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Ընկերության որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերն իրենց սեփականատեր բաժնետերերին տրամադրում են միևնույն իրավունքները:

Սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված՝ ձայնի իրավունք ունենալու դեպքերում քվեարկությունների ժամանակ արտոնյալ բաժնետոմսն իր սեփականատեր բաժնետիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնադրությամբ:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ժողովում ունեն ձայնի իրավունք, եթե քննարկվում են Ընկերության վերակազմակերպման կամ լուծարման հարցեր:

Բաժնետերերի ընդհանուր ժողովում արտոնյալ բաժնետոմսերի դասերով նախատեսված իրավունքների սահմանափակմանը վերաբերող հարցերի քննարկմանը կարող են մասնակցել այդ բաժնետոմսերի սեփականատերերը կամ անվանատերերը: Ընդ որում, իրավունքների սահմանափակման վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել միայն այն պարագայում, երբ այդ որոշմանը կողմ են քվեարկել համապատասխան դասի արտոնյալ բաժնետոմսերի առնվազն 3/4-ի սեփականատերերը կամ անվանատերերը: Սույն պարբերության իմաստով իրավունքների սահմանափակում են համարվում արտոնյալ բաժնետոմսերի շահութաբաժինների նվազեցումը, հաշվարկման և (կամ) վճարման կարգի փոփոխությունները:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ժողովում ունեն ձայնի իրավունք նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Արտոնյալ բաժնետոմսերը հասարակ (սովորական) բաժնետոմսերով փոխարկելիս Ընկերությունը պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը կամ նրանց համաձայնությամբ պարտավորվի վճարել պարտքերն այլ ձևով:

Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ Ընկերությունը դատական կարգով լուծարելու համար:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն օգտվում են սույն կանոնադրության 30-րդ կետի «ա», «գ», «դ», «է» և «ը» ենթակետերով սահմանված իրավունքներից՝ սույն կետով և օրենքով համապատասխան արտոնյալ բաժնետոմսերի համար սահմանված դրույթներին համապատասխան, իսկ «բ», «ե», «զ», «թ», «ժ» և «ժա» ենթակետերով

սահմանված իրավունքներից՝ հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերի հետ հավասար իրավունքներով:

33. Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 5 տոկոս կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ Ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները և գաղտնիք ներկայացնող փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը:

34. Բաժնետերերը պարտավոր են՝

ա) հետ չպահանջել իրենց ներդրումները.

բ) չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները, որոնց ցանկը սահմանում է խորհուրդը,

գ) օժանդակել Ընկերությանը՝ վերջինիս գործունեության իրականացման գործում:

Բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

35. Ընկերությունը, նրա բաժնետերերը, ինչպես նաև այն անձինք, որոնք բաժանորդագրվում են Ընկերության բաժնետոմսերին կարող են կնքել բաժնետիրական համաձայնագիր: Բաժնետիրական համաձայնագիրը բաժնետոմսերով հավաստվող իրավունքների իրականացման և (կամ) բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների իրականացման առանձնահատկությունների մասին պայմանագիր է: Բաժնետիրական համաձայնագրով կողմերը պարտավորվում են որոշակի ձևով իրականացնել բաժնետոմսերով հավաստվող իրավունքները և (կամ) բաժնետոմսերի նկատմամբ իրավունքները կամ ձեռնպահ մնալ այդ իրավունքների իրականացումից: Բաժնետիրական համաձայնագրով կարող է նախատեսվել բաժնետերերի ընդհանուր ժողովում համաձայնագրով սահմանված ձևով քվեարկելու, քվեարկության կարգը կամ քվեարկությունն այլ անձանց հետ համաձայնեցնելու, այլ անձանց ցուցումներով քվեարկելու, բաժնետոմսերը նախապես սահմանված գնով և (կամ) պայմանագրով սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ձեռք բերելու և (կամ) օտարելու, մինչև պայմանագրով հանգամանքների ի հայտ գալը բաժնետոմսերի օտարումից ձեռնպահ մնալու, ինչպես նաև Ընկերության կառավարման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման հետ կապված այլ համաձայնեցված գործողություններ իրականացնելու պարտավորությունը: Ընկերության ժողովում որոշումների ընդունման համար բավարար ձայների՝ օրենքով կամ դրա հիման վրա սույն կանոնադրությամբ նախատեսված քանակը չի կարող փոփոխվել բաժնետիրական համաձայնագրով:

Բաժնետիրական համաձայնագիրը կնքվում է գրավոր: Եթե Ընկերությունը հանդիսանում է բաժնետիրական համաձայնագրի կողմ, ապա այդպիսի բաժնետիրական համաձայնագրի կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև շահագրգռվածության առկայությամբ գործարքների համար օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դրույթները:

Բաժնետիրական համաձայնագրի առարկա չի կարող լինել Ընկերության խորհրդի կամ գլխավոր տնօրենի ցուցումների համաձայն բաժնետիրական համաձայնագրի կողմերի քվեարկելու պարտավորությունը:

Բաժնետիրական համաձայնագիրը պարտադիր է միայն համաձայնագրի կողմերի համար:

Բաժնետիրական համաձայնագրի խախտումը կարող է հիմք հանդիսանալ Ընկերության կառավարման մարմինների որոշումներն անվավեր ճանաչելու համար, եթե ապացուցվում է, որ Ընկերության կառավարման մարմինների որոշումներն ընդունվել են ֆիդուցիար պարտականությունների խախտմամբ:

Բաժնետիրական համաձայնագրով կարող են նախատեսվել դրանից բխող պարտավորությունների կատարման ապահովման, ինչպես նաև դրանով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ:

V ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

36. Ընկերության շահույթից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ, կանոնադրական կապիտալի 15 տոկոսից ոչ պակաս չափով: Եթե պահուստային հիմնադրամը արդյունքում կազմում է նշված չափից ավելի փոքր մեծություն, հատկացումները այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցների հաշվին:

Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, պարտատոմսերը մարելու և Ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են նախատեսվել նաև սպառման, կուտակման, շահութաբաժինների վճարման և այլ հիմնադրամներ:

VI ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԸ

37. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին: Ընկերությունը պարտավոր է վճարել բաժնետոմսերի յուրաքանչյուր տեսակի և դասի համար հայտարարված շահութաբաժինները դրամով կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ նաև այլ գույքով, այդ թվում՝ Ընկերության բաժնետոմսերով:

38. Շահութաբաժինները վճարվում են ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից): Որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել հատուկ այդ նպատակով ստեղծված ընկերության հիմնադրամների հաշվից:

39. Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման մասին որոշումն ընդունվում է Ընկերության խորհրդի կողմից:

Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ խորհրդի առաջարկությամբ: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել խորհրդի առաջարկածից և պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

40. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ընկերության խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց: Տարեկան և միջանկյալ շահութաբաժինները վճարվում են շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

VII ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ

41. Ընկերության կողմից իր թողարկած բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը պետք է հանձնվի «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձ չհամարվող մասնագիտացված կազմակերպությանը, որն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրավունք ունի վարելու անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր: Ռեեստրում նշվում են յուրաքանչյուր գրանցված անձի (բաժնետիրոջ, անվանատիրոջ) մասին տեղեկություններ, ինչպես նաև գրառվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկությունները:

42. Ռեեստրի վարումը և պահպանումը մասնագիտացված կազմակերպությանը հանձնած լինելու դեպքում Ընկերությունն ազատվում է այն վարելու և պահպանելու համար սահմանված պատասխանատվությունից:

43. Բաժնետերեր, անվանատերերը պարտավոր են Ընկերության ռեեստրը վարողին ժամանակին տեղեկացնել իրեն վերաբերող տվյալների փոփոխության մասին: Նշված տվյալները բաժնետիրոջ, անվանատիրոջ կողմից չներկայացնելու դեպքում Ընկերությունը և ռեեստր վարող մասնագիտացված կազմակերպությունը պատասխանատվություն չեն կրում բաժնետիրոջը պատճառված վնասի համար:

VIII ՇԱՀԱԳՐԳՈՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

44. Ընկերությունում որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածություն, ընդունում է խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող, խորհրդի անկախ անդամների ձայների մեծամասնությամբ:

Որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե՝

ա) գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին.

բ) գործարքը և/կամ մի շարք փոխկապակցված գործարքներ կնքվում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, և որոնց քանակն ավելի է Ընկերության՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից:

Սույն կետի երկրորդ պարբերության «ա» կամ «բ» կետերով սահմանված հատկանիշներին համապատասխանող գործարքը կարող է կնքվել խորհրդի որոշմամբ, եթե այդ գործարքն Ընկերությանը տրամադրվող փոխառություն է:

Եթե խորհրդի բոլոր անդամները շահագրգիռ անձինք են ճանաչվել, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է ժողովը՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ:

Եթե շահագրգռվածության առկայությամբ գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին, ապա անկախ գնահատողը մինչև գործարքի կնքման որոշումն ընդունելը տալիս է եզրակացություն գործարքի՝ շուկայական արժեքին համապատասխանության վերաբերյալ:

Ընկերությունը պարտավոր է սույն կետի երկրորդ պարբերության «ա» ենթակետով սահմանված շահագրգռվածության առկայությամբ գործարք կնքելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև նախորդ պարբերությամբ սահմանված եզրակացությունը տրամադրել Ընկերության

բոլոր բաժնետերերին կամ գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև նախորդ պարբերությամբ սահմանված եզրակացությունը հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում կամ Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում:

Օրենքով նախատեսված դեպքերում շահագրգռվածության առկայության դեպքում Ընկերության գործարքների կնքման վերաբերյալ սույն գլխով և օրենքով սահմանված պահանջները չեն կիրառվում:

IX ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

45. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ կառավարման բարձրագույն մարմինն է:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով ոչ ուշ, քան ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

46. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա. Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ, բացառությամբ սույն կանոնադրության 62-րդ կետի «գ» ենթակետով սահմանված դեպքերի (ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով).

բ. Ընկերության վերակազմակերպումը (ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով՝ խորհրդի ներկայացմամբ).

գ. Ընկերության լուծարումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ և ամփոփիչ լուծարային հաշվեկշիռների հաստատումը (ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից).

դ. Ընկերության խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկում են բացառապես Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովներում: Ընկերության խորհրդի անդամների ընտրության հարցն Ընկերության արտահերթ ժողովներում կարող է քննարկվել, եթե Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը որոշում է ընդունել Ընկերության խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

ե. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը (ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով).

զ. բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը (ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից).

է. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը, գործունեության կարգի, վարձատրության կամ վճարվող փոխհատուցման չափերի,

պայմանների սահմանումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրության հարցն Ընկերության արտահերթ ժողովներում կարող է քննարկվել, եթե Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

ը. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողովը կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի:

թ. ընդհանուր ժողովի վարման կարգը և հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը:

ժ. Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ մամուլին համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի հրապարակային հայտարարության ձևով (հաշվապահական հաշվառման անհրաժեշտ տվյալների և Ընկերության արտադրատնտեսական գործունեության հաշվետվություն) (խորհրդի ներկայացմամբ):

ժա. Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը, երբ գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքի կատարման մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին (ծայների 3/4-ով խորհրդի ներկայացմամբ):

ժբ. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

ժգ. Օրենքով կամ սույն կանոնադրությամբ սահմանված այլ հարցերով որոշումների ընդունումը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել որոշում ընդունելու համար Ընկերության խորհրդին:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չեն սահմանվել որպես Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասություն:

47. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերի:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի փոփոխել ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

Ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումներն, որոշում ընդունելու պահից, 45 օրվա ընթացքում պետք է հաղորդվեն բաժնետերերին: Բաժնետերերը իրավունք ունեն դատական կարգով գանգատարկել ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումը, եթե

նրանք չեն մասնակցել ժողովին կամ այդ որոշմանը դեմ են քվեարկել և որոշմամբ խախտվել են նրանց օրինական շահերը և իրավունքները:

48. Ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով: Տարեկան ժողովը, ինչպես նաև կանոնադրության 45 կետի «ը» ենթակետով սահմանված դեպքում հրավիրված արտահերթ ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

Հեռակա կարգով քվեարկությունն իրականացվում է համացանցով, Ընկերության էլեկտրոնային փոստին լրացված քվեաթերթիկները PDF ֆայլի տեսքով ուղարկելով:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ ժողովի օրակարգը և քվեաթերթիկները տեղադրվում են Ընկերության ինտերնետային կայքում, լրացված քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ:

49. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության տեղաբաշխված սովորական և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը, իրենց պատկանող լրիվ վճարված սովորական բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով, Ընկերության խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ ռեեստրավարի՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 197-րդ հոդվածով սահմանված կարգով տված տվյալների (ցուցակի) հիման վրա ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի (անվանատերերի) ցուցակին համապատասխան:

Խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող Ընկերության խորհրդի և գործադիր մարմնի անդամները, Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը), ինչպես նաև ժողովին կարող է մասնակցել նաև Ընկերության աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում):

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 60 օրից ավելի:

Եթե ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին:

Ընկերության բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը պարտավոր է տեղեկություններ տրամադրել բաժնետերերին ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրան ընդգրկելու մասին:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված բաժնետերերի խախտված օրինական իրավունքները և շահերը վերականգնելու նպատակով:

50. Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող անձինք,

ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հայտարարություն հրապարակելու միջոցով: Տարեկան ժողովի գումարման մասին հայտարարությունն Ընկերությունը պարտավոր է հրապարակել նաև <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Ընկերությունը պարտավոր է սույն կետով սահմանված կարգով ժողովի գումարման մասին իր բաժնետերերին ծանուցել ժողովի գումարման օրվանից 21 օր շուտ, որով բաժնետերերին տեղեկացվում է ժողովի գումարման վայրը, օրը ժամը, ընդգրկված հարցերը:

Ընկերության ժողովի գումարման մասին գրավոր ծանուցվում է վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը), ինչպես նաև Ընկերության աուդիտն իրականացնող անձը, եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերին:

51. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունները և նյութերը ներառում են՝

- Ընկերության տարեկան հաշվետվությունը.

- Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը.

- տեղեկություններ Ընկերության խորհրդի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), առաջադրվող թեկնածությունների մասին.

- Ընկերության կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ Ընկերության կանոնադրության նախագիծը նոր խմբագրությամբ.

- Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում ներկայացվելիք այլ տեղեկություններ և նյութեր:

52. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր բաժնետերերին քվեաթերթիկների և ժողովի օրակարգի հետ մեկտեղ առաքվում է սույն կանոնադրության 51-րդ կետով սահմանված տեղեկությունները և նյութերը:

53. Ընկերության բաժնետերը, որը ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի բաժնետեր է հանդիսանում, Ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում իրավունք ունի երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել Ընկերության խորհրդին ընդհանուր տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Ընկերության խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ: Առաջարկվող թեկնածուների քանակը չի կարող գերազանցել այդ մարմիններում անդամների սահմանված քանակը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցը մտցնող բաժնետիրոջ (բաժնետերերի) ազգանունը և անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը ըստ բաժնետոմսերի տեսակների և ձևերի:

Ընկերության խորհուրդը քննարկում է ներկայացված առաջարկությունները և ընդունում համապատասխան որոշում արված առաջարկությունները ընդհանուր ժողովում քննարկման դնելու մասին:

54. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում Ընկերության խորհուրդը որոշում է՝

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը, տեղը և ժամանակը.

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը.

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը:

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.

- բաժնետերերին Ընկերության բաժնետերերի ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.

- քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

55. Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը գումարվում է Ընկերության խորհրդի որոշմամբ, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), կամ Ընկերության աուդիտի իրականացնող անձի կամ պահանջ ներկայացնելու օրվա դրությամբ առնվազն 10 տոկոսի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

56. Հիսունից ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում ընդհանուր ժողովի որոշմամբ ստեղծվում է հաշվիչ հանձնաժողով, որի կազմը չի կարող երեք հոգուց պակաս լինել: Հաշվիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել խորհրդի անդամները, Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը), Ընկերության գլխավոր տնօրենը, ինչպես նաև այն անձինք, որոնք առաջադրված են այդ պաշտոնների թեկնածուներ:

Հաշվիչ հանձնաժողովը որոշում է ժողովի քվորումը, բաժնետերերին և նրանց ներկայացուցիչներին բացատրություններ է տալիս ժողովում օրակարգի հարցերի քվեարկման կարգի վերաբերյալ, ապահովում է քվեարկության սահմանված կարգը և բաժնետերերի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքը, իրականացնում է ձայների հաշվարկը, ամփոփում է քվեարկության արդյունքները, դրանց վերաբերյալ կազմում է արձանագրություն և Ընկերության արխիվ է փոխանցում քվեաթերթիկները:

Ընկերությունում հաշվիչ հանձնաժողովի գործառույթների կատարումը կարող է դրվել Ընկերության մասնագիտացված գրանցողի վրա:

57. Ընկերության բաժնետերը ընդհանուր ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով (լիազորագրի առկայության դեպքում):

Բաժնետիրոջ փոխարեն լիազոր ներկայացուցչի մասնակցությունն իրականացվում է բաժնետիրոջ կողմից ներկայացուցչին տրված, նոտարական կարգով հաստատված լիազորագրով, որով ամրագրվում է բաժնետիրոջ կողմից ներկայացուցչին փոխանցված իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև դրանց իրականացման ժամկետները:

58. Ընկերության ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին: Եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը տևում է մեկ օրից ավելի, յուրաքանչյուր օրվա համար կազմվում է ժողովի մասնակիցների գրանցման առանձին ցուցակ:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է Ընկերության բաժնետերերի նոր ընդհանուր ժողով: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում: Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

59. Քվեարկությունը ընդհանուր ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ խորհրդի անդամների

ընտրության և օրենքով կամ սույն կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերի, երբ կիրառվում է գումարային (կումուլյատիվ) քվեարկության սկզբունքը:

Հիսունից ավելի ծայնի իրավունք տվող բաժնետոմսեր ունեցող բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկությունները կատարվում են քվեաթերթիկների միջոցով, որի ձևը և բովանդակությունը հաստատվում է Ընկերության խորհրդի որոշմամբ:

Ընկերության հաշվիչ հանձնաժողովի կամ նրա գործառույթներն իրականացնող անձի կողմից քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, այն ստորագրվելուց անմիջապես հետո քվեաթերթիկները զմրսվում և հանձնվում են Ընկերության արխիվ պահպանության: Քվեարկության մասին արձանագրությունը կցվում է ընդհանուր ժողովի արձանագրությանը, որին ծանոթանալու իրավունք ունեն բաժնետերերը:

60. Ընկերության ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում, երկու օրինակով, որոնք ստորագրվում են ժողովի նախագահի և քարտուղարի կողմից: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար: Ընկերության բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալու ընդհանուր ժողովի արձանագրություններին:

61. Ընկերության խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերաբերվում են Ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության խորհրդի անդամների համար կարող է սահմանվել վարձատրություն կամ փոխհատուցում նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ:

62. Ընկերության խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը:

բ. Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր և արտահերթ ժողովի գումարումը (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի) և դրանց օրակարգի հաստատումը:

գ. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և գումարման հետ:

դ. սույն կանոնադրության 46 կետում նշված, ինչպես նաև օրենքով նախատեսված համապատասխան հարցերի ներկայացումն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը:

ե. բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը, պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը:

զ. կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված Ընկերության կանոնադրության փոփոխությունների կատարումը (խորհրդի միաձայն որոշմամբ):

է. գույքի շուկայական արժեքի որոշումը:

ը. Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը:

թ. խորհրդին կից հանձնաժողովների (հանձնախմբերի), այդ թվում՝ աուդիտի հանձնաժողովի (հանձնախմբի) ձևավորումը:

ժ. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը:

ժա. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի, վճարման կարգի վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

ժբ. Ընկերության բաժնետոմսերի միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

ժգ. Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժդ. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ժե. Ընկերության գործադիր մարմնի (գլխավոր տնօրենի) ձևավորումը (նշանակումը), նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, գլխավոր տնօրենի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգը և պայմանները

ժզ. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը

ժէ. ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

ժը. այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք (որոշում ընդունելու պահին Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի առնվազն 50 և ավելի տոկոս կազմող արժեք) չի ներկայացնում.

ժթ. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը.

ի. Ընկերության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը:

իա. դուստր և կախյալ Ընկերությունների ստեղծումը, այդ Ընկերություններին մասնակցությունը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

իբ. Օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:

Ընկերության խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

Խոշոր գործարքի կատարման մասին որոշումը պետք է ընդունվի Ընկերության խորհրդի կողմից միաձայն, հակառակ դեպքում խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում այդ հարցը քննարկման առաջարկելու մասին:

63. Ընկերության խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից օրենքով սահմանված կարգով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

Ընկերության խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

Ընկերության այն բաժնետերերը, որոնք տիրապետում են Ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Ընկերության խորհրդի կազմում, կամ Ընկերության խորհրդի կազմում նշանակել իրենց ներկայացուցչին:

Յուրաքանչյուր բաժնետեր Ընկերության խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

Ընկերության խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները, բայց ոչ պակաս քան ժողովում ներկայացված ձայների պարզ մեծամասնությունը:

Ընկերության խորհրդի քանակական կազմը սահմանվում է 6 (վեց) անդամից: Սույն կետով սահմանված սահմանափակումը չի տարածվում այն անձանց վրա, որոնք սույն կետի երրորդ պարբերության համապատասխան իրավունք ունեն ընդգրկվել խորհրդի կազմում առանց ընտրության:

Ընկերության խորհրդի անդամ կարող են լինել ինչպես բաժնետեր հանդիսացող, այնպես էլ Ընկերության բաժնետեր չհանդիսացող գործունակ ֆիզիկական անձինք:

Ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող Ընկերության խորհրդի կազմում մեծամասնություն կազմել:

64. 2020 թվականին Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից պետք է ընտրվի խորհրդի նոր կազմ: Խորհրդի այդ և յուրաքանչյուր հաջորդ կազմում անդամների առնվազն մեկ երրորդը պետք է լինի անկախ: Եթե մեկ երրորդը բնական թիվ չէ, ապա խորհրդի անկախ անդամների թիվ է համարվում մեկ երրորդին առավել մոտ ամբողջ թիվը:

Խորհրդի անկախ անդամ կարող է ընտրվել այն անձը, ով՝

ա) վերջին երեք տարվա ընթացքում Ընկերությունում գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել Ընկերությունում կամ դրա հետ փոխկապակցված այլ անձի մոտ.

բ) վերջին երեք տարվա ընթացքում Ընկերությունից կամ Ընկերության հետ փոխկապակցված անձից (անձանցից) ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես խորհրդի անդամ ստացած վարձատրության.

գ) վերջին երեք տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն՝ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ (ներկայացուցիչ) չի ունեցել էական որևէ գործարար հարաբերություն Ընկերության և (կամ) Ընկերության հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ.

դ) վերջին հինգ տարվա ընթացքում չի հանդիսացել Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի և (կամ) դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) բաժնետեր և (կամ) աշխատող.

ե) վերջին 10 տարվա ընթացքում 6 տարուց ավելի չի հանդիսացել Ընկերության խորհրդի անդամ.

զ) չի հանդիսանում Ընկերության նշանակալից բաժնետեր.

է) վերջին մեկ տարվա ընթացքում անմիջական հսկողություն չի իրականացրել Ընկերության նկատմամբ՝ որպես հանրային ծառայող.

ը) չի հանդիսանում սույն կետի «ա-է» ենթակետերում նշված անձանցից որևէ մեկի ընտանիքի անդամ:

Սույն կետի իմաստով նշանակալից է համարվում Ընկերության 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը:

Խորհրդի անկախ անդամին վերաբերող սահմանափակումները գործում են նաև խորհրդի անկախ անդամի պարտականությունները կատարելու ժամանակահատվածում:

65. Ընկերության խորհրդի նախագահն ընտրվում է Ընկերության խորհրդի անդամների կողմից, խորհրդի անդամների ընդհանուր ձայների քանակի մեծամասնությամբ:

Խորհրդի նախագահի և գլխավոր տնօրենի պաշտոնները չեն կարող համատեղվել: Խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել:

Ընկերության խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին, կամ ընտրել նոր նախագահ խորհրդի անդամների ընդհանուր ձայների քանակի մեծամասնությամբ:

Ընկերության խորհրդի նախագահը կազմակերպում է Ընկերության խորհրդի աշխատանքները, գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանցում: Կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը, նախագահում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում:

Ընկերության խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Ընկերության խորհրդի որոշմամբ կատարվում է Ընկերության խորհրդի անդամներից որևէ մեկը:

66. Ընկերության խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահին իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտին իրականացնող անձի կամ գլխավոր տնօրենի պահանջով:

Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին և խորհրդի որոշումները ընդունվում են խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

Քվեարկության ժամանակ խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն Ընկերության խորհրդի մեկ անդամից խորհրդի մյուս անդամին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում:

Քվեարկության ժամանակ ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

Ընկերության խորհրդի նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում:

Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

67. Ընկերության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենը:

Ընկերության գլխավոր տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ վերը նշված Ընկերության ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը:

Ընկերության գլխավոր տնօրենի հետ պայմանագիրը կնքում է Ընկերության խորհրդի նախագահը կամ խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

68. Ընկերության գլխավոր տնօրենն իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը և հանդիսանում է Ընկերության միանձնյա գործադիր մարմինը:

Ընկերության գլխավոր տնօրենը՝

ա) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.

բ) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

գ) գործում է առանց լիազորագրի.

դ) տալիս է լիազորագրեր.

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

է) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

69. Խորհրդի անդամները, Ընկերության գլխավոր տնօրենը, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպությունը և կառավարիչն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն

իրենց իրավունքները և Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով, խուսափեն անձնական և Ընկերության շահերի միջև իրական և հնարավոր բախումներից (ֆիդուցիար պարտականություն):

Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության կամ այլ հանգամանքների ուժով Ընկերության որոշումների վրա էականորեն ազդելու հնարավորություն ունեցող անձը չպետք է դրդի խորհրդի անդամներին, Ընկերության գլխավոր տնօրենին, ինչպես նաև կառավարիչ կազմակերպությանը և կառավարչին՝ կայացնելու այնպիսի որոշումներ, որոնք հակասում են Ընկերության շահերին կամ այն բաժնետերերի օրինական շահերին, որոնք էական ազդեցություն չեն կարող ունենալ Ընկերության որոշումների վրա:

Խորհրդի անդամները, Ընկերության գլխավոր տնօրենը, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպությունը և կառավարիչն ու օրենքով սահմանված այլ անձինք Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

Ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են խորհրդի այն անդամները, ովքեր Ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

Խորհրդի կամ Ընկերության գլխավոր տնօրենի հրաժարականը, պաշտոնից հետ կանչելը կամ ազատելը չի ազատում նրանց՝ Ընկերությանը պատճառած վնասի համար պատասխանատվությունից:

Խորհրդի կամ Ընկերության գլխավոր տնօրենի, կառավարիչ-կազմակերպության և կառավարչի պատասխանատվության հիմքերի և չափի որոշման ժամանակ պետք է հաշվի առնվեն գործարար շրջանառության սովորույթները և գործի համար կարևոր նշանակություն ունեցող մյուս հանգամանքները:

ՎԵՐԱՀԱՅՈՒՄ, ԱՌԻԴԻՏԸ ԵՎ ԱՌԻԴԻՏԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

70. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է վերստուգող հանձնաժողովը, որն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ 3 տարի ժամկետով: Վերստուգող հանձնաժողովի նախագահն ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների կողմից ձայների պարզ մեծամասնությամբ:

Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած գործունակ ֆիզիկական անձինք:

Վերստուգող հանձնաժողովը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը: Նա իրավունք ունի իրականացնել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Վերստուգող հանձնաժողովի պահանջով նրան պետք է տրամադրվեն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը, բացատրությունները:

Վերստուգող հանձնաժողովն Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը պարտադիր է:

71. Սույն կանոնադրության 75-րդ կետում սահմանված փաստաթղթերը (տեղեկությունները) հրապարակելուց առաջ Ընկերությունը պարտավոր է տարեկան հաշվետվության, տարեկան հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի հավաստիությունը վերստուգելու համար ներգրավել աուդիտորի, որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ:

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել աուդիտն իրականացնող անձի՝ աուդիտորի (կազմակերպության կամ ֆիզիկական անձի), որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտորի կողմից կարող է իրականացվել նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետերերի առնվազն հինգ տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:

Ընկերության աուդիտն իրականացնող անձին հաստատում է ժողովը: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է խորհրդի նախագահը: Խորհուրդը որոշում է աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը:

Սույն կետի երրորդ պարբերությամբ սահմանված դեպքում Ընկերության աուդիտն իրականացնող անձին ընտրում և նրա հետ պայմանագիր են կնքում ստուգումը պահանջող բաժնետերերը:

72. Ընկերությունում ոչ ուշ, քան 2019 թվականի հոկտեմբերի 26-ից սկսած ձևավորվում է խորհրդին կից աուդիտի հանձնաժողով:

Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովը (այսուհետ՝ Աուդիտի հանձնաժողով) կազմված է բացառապես խորհրդի անդամներից: Աուդիտի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է լինի խորհրդի անկախ անդամ:

Աուդիտի հանձնաժողովի անդամ չի կարող լինել այն անձը, ով ներգրավված է Ընկերության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) ընթացիկ գործունեության ղեկավարման մեջ:

Աուդիտի հանձնաժողովի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից: Աուդիտի հանձնաժողովի նախագահը պետք է լինի խորհրդի անկախ անդամ: Խորհրդի նախագահի և Աուդիտի հանձնաժողովի նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել: Աուդիտի հանձնաժողովը՝

ա) իրականացնում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների և Ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների արժանահավատության ապահովման գործընթացի վերահսկում (ստուգում)։

բ) իրականացնում է Ընկերության եռամսյակային և տարեկան հաշվետվությունների վերլուծություն և դրանց հաստատման վերաբերյալ խորհրդին առաջարկություններ է ներկայացնում։

գ) իրականացնում է Ընկերության ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման, գործող օրենքներին, իրավական ակտերին և այլ պահանջներին համապատասխանելու համակարգերի գործունեության ստուգում։

դ) խորհրդին առաջարկություններ է ներկայացնում Ընկերության արտաքին աուդիտորի ընտրության չափանիշների, վարձատրության և այլ էական պայմանների վերաբերյալ.

ե) իրականացնում է Ընկերության արտաքին աուդիտորի անկախության, օբյեկտիվության և արդյունավետության վերահսկում ու վերլուծություն.

զ) տարեկան առնվազն մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտորի հետ.

է) իրականացնում է Ընկերության արտաքին աուդիտորի հաշվետվությունների վերլուծություն և համապատասխան տեղեկատվություն է տրամադրում խորհրդին.

ը) հետևում է Ընկերության արտաքին աուդիտորի առաջարկությունների իրականացմանը.

թ) իրականացնում է Ընկերության ներքին հսկողության համակարգի վերաբերյալ քաղաքականությունների մշակում և հետևում է դրանց ներդրմանը:

Ընկերության ներքին իրավական ակտերով կարող են սահմանվել Աուդիտի հանձնաժողովի այլ իրավասություններ:

73. Ընկերության գործադիր մարմինը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, վիճակի, հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունը պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներին տրամադրվող տեղեկությունների համար:

Ընկերության տարեկան հաշվետվությունը ենթակա է նախնական հաստատման Ընկերության խորհրդի կողմից, Ընկերության ընդհանուր ժողովում քննարկելուց 30 օր առաջ:

74. Ընկերությունը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պահպանել՝

- Ընկերության հաստատված կանոնադրությունը, նրանում կատարված լրացումները, փոփոխությունները, նոր խմբագրությամբ կանոնադրությունը.

- Ընկերության հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Ընկերության գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերը.

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և կառավարման մարմինների կողմից հաստատված Ընկերության ներքին փաստաթղթերը.

- Ընկերության տարեկան հաշվետվությունները.

- Ընկերության բաժնետոմսերի թողարկման ազդագրերը.

- հաշվապահական հաշվառման փաստաթղթերը.

- պետական կառավարման մարմիններին ներկայացվող հաշվապահական և վիճակագրական հաշվետվության փաստաթղթերը.

- Ընկերության ընդհանուր ժողովի, խորհրդի և վերստուգող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, քվեաթերթիկները.

- Ընկերության վերստուգող հանձնաժողովի, աուդիտի իրականացնող անձի, պետական և տեղական ինքնակառավարման ֆինանսական վերահսկում իրականացնող մարմինների եզրակացությունները:

Ընկերությունը բաժնետերերի պահանջով պարտավոր է նրանց հնարավորություն ընձեռել ծանոթանալու վերը նշված փաստաթղթերին և սույն կետի հաջորդող պարբերություններով սահմանված կարգով՝ հնգօրյա ժամկետում նրանց տրամադրել փաստաթղթերի պատճենը, բացառությամբ գաղտնի տեղեկությունների, ինչպես նաև գլխավոր տնօրենի հրամանների և հրահանգների: Գլխավոր տնօրենի հրամանները և հրահանգները, ինչպես նաև այլ գաղտնի տեղեկությունները տրամադրվում են միայն խորհրդի անդամներին և վերստուգող հանձնաժողովին՝ վերջիններիս պահանջով:

Այն բաժնետերը, ով ցանկանում է ծանոթանալ սույն կետում նշված փաստաթղթերին կամ Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը, պարտավոր է անձամբ կամ լիազորված անձի միջոցով Ընկերության գլխավոր տնօրենին ներկայացնել գրավոր դիմում, որում պետք է հստակ հիշատակվեն այն փաստաթղթերը կամ այլ տվյալները, որոնց ցանկանում է նա ծանոթանալ: Դիմումին կցվում է բաժնետիրոջ անձնագրի պատճենը, ինչպես նաև նրան պատկանող բաժնետոմսերի սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթի (քաղվածքի) պատճենը: Լիազորված անձի միջոցով ներկայացված դիմումին պետք է կցված լինի նաև բաժնետիրոջ կողմից տրված նոտարական վավերացմամբ լիազորագիր:

Նախորդ պարբերությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանող դիմումը համարվում է չներկայացված և Ընկերությունը պարտավոր չէ դրան արձագանքել կամ որևէ կերպ ընթացք տալ:

Եթե պահանջվող փաստաթղթերը կամ այլ տվյալները հրապարակված են ինտերնետում կամ որևէ այլ կերպ հասանելի են դարձված հանրությանը, ապա գլխավոր տնօրենի կամ նրա կողմից լիազորված Ընկերության այլ աշխատակցի կողմից դիմումատու բաժնետիրոջն է ներկայացվում համապատասխան տեղը (հղումը), որտեղ կարելի է ծանոթանալ համապատասխան փաստաթղթին կամ այլ տվյալներին: Եթե այդ պատասխանը ստանալուց հետո համապատասխան բաժնետերը պնդում է համապատասխան փաստաթղթի պատճենը Ընկերությունից ստանալը, ապա Ընկերության գլխավոր տնօրենը կամ նրա կողմից լիազորված Ընկերության այլ աշխատակիցը հնգօրյա ժամկետում ապահովում է համապատասխան փաստաթղթերի պատճենների տրամադրումը՝ ներկայացնելով պատճենների տրամադրման համար սահմանված վճարի չափը և վճարման կարգը, և պայմանով, որ դիմումատուն կատարած լինի համապատասխան վճարումը:

Պատճեններ տրամադրելու համար վճարի չափը, որը սահմանում է Ընկերության գլխավոր տնօրենը, չի կարող դրանց պատրաստման և փոստային առաքման ծախսերից ավելի լինել:

Ընկերության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալ վերջին տարեկան հաշվետվության և վերստուգող հանձնաժողովի եզրակացության պատճենը:

75. Ընկերությունը պարտավոր է <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝

- Ընկերության տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռը, շահույթի և վնասների հաշիվը.

- բաժնետոմսերի թողարկման ազդագիրը.

- Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը.

- «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

XI ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

76. Ընկերության լուծարումը՝ հանգեցնում է Ընկերության դադարմանը առանց Ընկերության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցման: Ընկերությունը կարող է լուծարվել՝

- ա) ժողովի որոշմամբ,

- բ) դատարանի կողմից Ընկերության գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օրենքի խախտումների հետ.

- գ) օրենքով սահմանված այլ հիմքերով:

Ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը նախորդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված դեպքերում կայացնում է ժողովը՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

Ժողովը հաստատում է նաև ամփոփիչ հաշվեկշիռը, ընդունում է որոշումներ՝ լուծարման կարգի և ժամկետների, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի բաշխման կարգի մասին:

Լուծարման հանձնաժողովի ստեղծման պահի դրությամբ Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն իրավունք ունեն ընդգրկվել լուծարման հանձնաժողովի կազմում կամ նշանակել իրենց լիազոր ներկայացուցչին:

Լուծարման հանձնաժողովի անդամները կարող են վարձատրվել՝ ժողովի որոշմամբ սահմանված կարգով:

Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

Ընկերության բաժնետերերը, այլ արժեթղթերի տերերն ու պարտատերերն իրավունք ունեն ծանոթանալ Ընկերության լուծարմանն առնչվող բոլոր փաստաթղթերին:

Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են փոխանցվում Ընկերության գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարային հանձնաժողովը:

Լուծարման հանձնաժողովը <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն է զետեղում Ընկերության լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից, որը համարվում է Ընկերության լուծարման գործընթացի սկիզբ:

Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած, պետական գրանցման պահից: